

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016Թ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանը բնակչության բարեկեցության բարելավման և համայնքային խնդիրները լուծելու նպատակով կատարել է հետևյալ աշխատանքները.

2016թվականի սեպտեմբերի 18-ին համայնքում անցկացվել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որի արդյունքում ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավար է ընտրվել Տիգրան Բաղդասարյանը և ավագանու թվով 9 նորընտիր անդամներ.

2016թվականի դեկտեմբերին 26-ին Մյասնիկյանի համայնքապետարանում անցկացվել է գլխավոր մասնագետ՝ Լ.Սմբատյանի համայնքային ծառայության հերթական ատեստացիան:

Ստացվել է 178 գրություններ, պատասխանվել է 150 գրությունների, ընդունվել է համայնքի ղեկավարի 120 որոշումներ, արձակվել 27 կարգադրություններ.

Համայնքի ավագանին զուգարել է 6 հերթական նիստ, 6 արտահերթ նիստ ավագանու նիստ, ընդունել 58 որոշում:

Քարտուղարության բաժին է գրանցվել է 917 քաղաքացիների ընդունելություններ.

Կրթություն, մշակույթ, երիտասարդություն

Մյասնիկյան համայնքապետարանը կազմակերպել է համայնքի ենթակայության կազմակերպությունների՝ մանկապարտեզի, կուլտուրայի տան, գրադարանի, երաժշտական դպրոցի գործունեությունը.

Մայիսի 1-ից վերաբացվել է համայնքի մանկապարտեզը, որտեղ գործել է չորս խումբ՝ իր 110 երեխաներով: Համայնքի բյուջեից 13676,2 հազար դրամ զուգար հատկացվել է մանկապարտեզի սննունդի ձեռք բերման և աշխատավարձի վճարման համար.

Առաջին անգամ դպրոց հաճախող երեխաներին համայնքապետարանը նվիրել դպրոցական պայուսակներ:

Մշակույթի բնագավառում կազմակերպվել և անցկացվել է տարբեր միջոցառումներ՝ նվիրված անկախության օրվան, հայոց բանակի օրվան, կանանց և գեղեցկության և այլ տոներին նվիրված:

Նոր-Տարվա կապակցությամբ համայնքի կենտրոնում տեղադրվել է տոնաձառ,

և տոնական տեսք է տրվել գլխավոր փողոցներին:

Դեկտեմբերի 30-ին կազմակերպվել է Ամանորի մեծ միջոցառում՝ համերգ, հրավառություն: Թվով 450 երեխաներին բաժանվել է նոր տարվա նվերներ:

Սպորտի ոլորտում անցկացվել է տարբեր մարզաձևերի մրցութային խաղեր, Տուտբոլի մրցաշարեր:

համայնքը աջակցել է «Հայրենական», «Ազրոլրատու», «Արտակարգ» թերթերի հրապարակման և տարածման համար.

կանոնավոր իրականացվել է աշնան գորահավաքի կազմակերպման աշխատանքները, համապատասխան աշխատակցի կողմից վարվում է զինգալարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանները.

1. Գյուղատնտեսություն

2016 թվականին համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերից կատարվել է 450,0 հա հողատարածքի ցանք, հատկապես ավելացել է բանջար- բոստանային կուլտուրաները:

Համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվել և իրացվել է 125 տոննա պտղի բերք, 650 տոննա խաղողի բերք, 26 տոննա հացահատիկ: համայնքը համագործակցել է ԳԱՄԿ-ի հետ՝ գյուղատնտեսական ոլորտի օգնություն ցուցաբերելու, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, րիզնես-ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների կազմակերպման բնագավառում:

Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության արտադրության վարկավորման գործնթացին.

Հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ.

համայնքում տարվել է առկա անասնազլխաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.

Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել, պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 13 դիմումներ. Գարնանը կատարվել է դաշտային գլխավոր ճանապարհների հարթեցման և փոսայցման աշխատանքներ.

Պետական աջակցությամբ համայնքում գյուղացիական տնտեսություններին է հատկացվել ցորենի, գարու, առվույտի սերմացու, ագրոտական պարարտանյութ, և դիզ վառելիք

3. Կոմունալ տնտեսություն

համայնքում կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի միջոցներով կանոնավոր իրականացվում է աղբաթափման և սանիտարական մաքրման աշխատանքներ.

համայնքում իրականացվել է կոյուղու կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքներ.

2016թվականին համայնքապետարանի կողմից անցկացվել է համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության ճանապարհի գիշերային լուսավորություն ,իսկ տարվա վերջին արտաքին լուսավորություն է անցկացվել միջհամայնքային նշանակության՝ Շրագի, Սևակի, Գայի, Իսահակյան Արովյան փողոցները, լուսավորություն տեղադրվել նաև բազմաբնակարանային շենքերի մուտքերի մոտ.

հարթեցվել և փոսալցվել է համայնքի Իսակով միջհամայնքային փողոցը.

4.Ֆինանսական և սոցիալական ծառայություն

Կազմակերպվել և միջոցներ է ձեռնարկվել հիվանդների, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման համար Համայնքի բյուջեից 49650,0 հազար դրամ գումար է տրամադրվել բուժման կարիք ունեցող բնակիչների , սոցիալապես անապահով պայմաններում բնակվողների և մահացածների ընտանիքներին՝ որպես դրամական օգնություն իրականացվել է աշխատակազմի հաշվապահական հաշվառման ,աշխատակազմի ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների գծով գործառույթները.

Իրականացվել է համայնքապետարան և նրա ենթակա կազմակերպությունների հիմնական միջոցների ամենամյա հաշվառման և գրանցման աշխատանքներ. Համայնքապետարանը իր և ենթակա կազմակերպությունների աշխատավարձի գծով պարտք չունի.

2016թվականի ընդհանուր տարեկան բյուջեն կատարվել է 101,2 %-ով , սեփական եկամուտների գծով 106,7 %-ով:

Մյասնիկյան համայնքում նախադպրոցական կրթության ընդլայնման, բնակչության կենցաղային պայմանների բարելավման, հանրային ծառայությունների մատուցման համար համայնքում կան լուծելու շատ հիմնախնդիրներ, դրանք են՝

- Համայնքի թվով երեք բազմաբնակարանային շենքերի գազաֆիկացում
- Համայնքում կոյուղու ցանցի ընդլայնում
- Մանկապարտեզի և կուլտուրայի տան վերանորոգում

- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում
- Համայնքի կենտրոնի կանաչապատում և նորոգում

Համայնքի ղեկավար



Տ.Բաղդասարյան